Դավիթ Գյուլզատյան[*]
Վանաձորի Հովհաննես Թումանյանի
անվան պետական համալսարան

ԼԵԶՎԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՇԵՐՏԵՐԻ ԵՎ ԳՈՅԱՇԵՐՏԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ABSTRACT

Relationship of Structural Layers and Ontic Layers of Language Composition

In recent decades, the understanding of hierarchical levels of language has been largely based on the theory of Emile Benveniste. Linguistic composition is the totality of ontological and structural (hierarchical) levels of language. Each of the hierarchical components of language is clearly localized at each of the ontic levels. In the work, an attempt is made to present a new concept of levels based on new principles by crossing the hierarchical and ontic layers of language. Such an approach also makes it possible to define linguistic disciplines, based on the divisions of the theory of language in the case of hierarchy, based on interdisciplinary relations in the case of ontic layers.

---

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

Keywords: justification function, syllable composition, word level, lexeme, phoneme, morpheme.

РЕЗЮМЕ

Взаимосвязь структурных слоев и онтических слоев языковой композиции

В последние десятилетия понимание иерархических уровней языка во многом базируется на теории Эмиля Бенвениста. Языковой состав – это совокупность онтологических и структурных (иерархических) уровней языка. Каждый из иерархических компонентов языка четко локализован на каждом из онтических уровней. В работе предпринята попытка представить новую концепцию уровней, основанную на новых принципах путем пересечения иерархического и онтического слоев языка. Подобный подход позволяет также определять лингвистические дисциплины на основе разделов теории языка при иерархии, на основе междисциплинарных отношений при онтических слоев.

Ключевые слова: функция обоснования, состав слога, уровень слова, лексема, фонма, морфема.

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

ԱՄՓՈՓՈՒՄ

Վերջին տասնամյակների՝ լեզվի ստորակարգային մակարդակների ըմբռնումը գերազանցապես հիմնված է Էմիլ Բենվենիստի տեսության վրա: Լեզվական հորինվածքն ամբողջությունն է լեզվի գոյաբանական և կառուցվածքային մակարդակների: Լեզվի ստորակարգային բաղադրիչներից յուրաքանչյուրը հստակորեն տեղայնացված է գոյամակարդակներից յուրաքանչյուրում: Աշխատանքում փորձ է արվում նոր սկզբունքների հիման վրա ներկայացնելու մակարդակների մի նոր հայեցակարգ՝ լեզվի ստորակարգային և գոյաբանական շերտերի խաչավորմամբ: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս նաև որոշարկելու լեզվաբանական գիտակարգերը՝ ստորակարգության դեպքում լեզվի տեսության բաժինների հիման վրա, գոյաշերտերի դեպքում միջգիտակարգային հարաբերությունների հիման վրա:

Առանցքային բառեր. հիմնավորման գործառույթ, վանկակազմ, բառային մակարդակ, բառույթ, հնչույթ, ձևույթ

Մուտք

Վերջին տասնամյակների ստորակարգային մակարդակների ըմբռնումը գերազանցապես հիմնված է Էմիլ Բենվենիստի տեսության վրա, որն իր հայեցակարգը ներկայացրել է 1962-ին ԱՄՆ-

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

ում տեղի ունեցած լեզվաբանների միջազգային IX գիտաժողովում [12: **491-498**, 8: **168-185**][†]: Մակարդակներն առանձնացնելիս Է. Բենվենիստը հիմք է ընդունել ֆրանսերենի և անգլերենի նման անջատական տիպի լեզուները՝ տարբերակելով չորս մակարդակ (տարրութային, հնչութային, նշանային, ստորոգային)՝ միաժամանակ զգուշացնելով, որ տարբեր լեզուներում մակարդակների տարբեր քանակ է հնարավոր՝ ըստ դրանց կառուցվածքների [12: **491-498**, 8: **168-185**]: Ժամանակակից հայերենի համար, օրինակ, Է. Աղայանը յոթ մակարդակ է տարբերակում (տարրութային, հնչութային, ձևութային, բառային, ձևաբանական, շարահյուսական, ստորոգային) [5: 34-48] : Քանի որ թեքական գրաբարն ու ռուսերենը և թեքակցական արդի հայերենը քերականական ձևերով ավելի առատ են, որոնք նաև մակարդակների առատություն են թելադրում, մենք ևս նպատակահարմար գտանք հիմնվել ահա այս լեզուների վրա, որոնց լի մակարդակների մի մասը ֆրանսերենի, անգլերենի և

---

† Գոհունակությամբ տեղեկացնում ենք, որ վերջերս հայերեն թարգմանությամբ լույս է տեսել Էմիլ Բենվենիստի «Ընդհանուր լեզվաբանության խնդիրներ» երկհատոր աշխատությունը (թարգմանիչ՝ Ամալյա Մուրադյան):

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

անջատական այլ լեզուների համար կդրսևորվի որպես (տվյալ մակարդակային միավորների) դատարկ բազմություն: Աշխատանքի **նպատակը** լեզվի գոյաբանական և ստորակարգային մակարդակների հարաբերակցության բացահայտումն է: Նպատակից բխող **խնդիրներն** են՝ ա) յուրաքանչյուր մակարդակի հիմնավորումը՝ գիտականորեն անխոցելի սկզբունքով, բ) յուրաքանչյուր մակարդակի, մակարդակային հսկացության, պատկերացման և միավորի համար նույնական չափանիշների հաստատումը, գ) ստորակարգային մակարդակների գոյամակարդակային տեղայնացման խստորոշումը: Աշխատանքի **նորույթը** լեզվի երկբնույթ մակարդակները նոր հայեցակերպով քննելն ու դրանց փոխպայմանավորվածությունն առաջին անգամ բացահայտելն է: **Արդիականությունը** բխում է աշխատանքի նորույթի և խնդիրների հրատապությունից: Աշխատանքում առավելապես գործադրված է հետազոտության **տրամախոսական մեթոդը**՝ քննվող իրակությունների ներքին հակասությունների բացորոշմամբ:

Լեզվի ստորակարգային մակարդակների ընդհանուր բնութագիրը՝ գոյամակարդակային աղերսներով

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

Ստորակարգային մակարդակները լեզվական «շինության» հարկերն են: Ամեն նախորդ հարկ՝ մակարդակ, հիմք է հաջորդի համար: Նշանակում է՝ մակարդակների առանձնացումը պայմանավորված է համապատասխան միավորներով, որոնց վրա այս կամ այն միավորի ավելացմամբ է ձևավավորվում մի նոր բաղադրակազմով միավոր, որը չի կարող տեղավորվել բաղադրվող (սերող) միավորի մակարդակում: Սա նշանակում է, որ բացի վերին մակարդակից, մնացյալ մակարդակային միավորները, ի թիվս այլոց, պարտադիր կարգով պետք է ունենան նաև (բառիս ստուգաբանական իմաստով) **հիմնավորման գործառույթ**: Այսինքն՝ հնչական մակարդակի առանձնացումն արդարացված է նրանով, որ հնչյունը հիմք է վանկի և այլ միավորների ձևավորման համար, բառային մակարդակի առանձնացումը բառի շարակցական հիմքի պայմանավորվածությունն ունի և այլն:

Դիտարկումն սկսենք իմաստակիր միավորների մակարդակներից: Ելնելով հիմնավորման գործառույթից՝ միանգամայն համամիտ ենք Գ. Ջահուկյանի՝ համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ ձևութային մակարդակը կառուցվածքային մակարդակների կազմից դուրս թողնելու մոտեցմանը. ըստ նրա՝ չեն կարող նույն լեզվական միավորները

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

քննվել տարբեր մակարդակներում: Ինչ խոսք, սա չի նշանակում, թե նույն բաղադրակազմով նյութական միավորը չի կարող գործառական տարբերություններ ունենալ: Հենց վերջինով պայմանավորված՝ այդ միավորը տարամակարդակություն է հանդես բերում: Ասվածի լավագույն օրինակը հայերենում «է» միավորն է, որը հնչական մակարդակի միավոր է որպես ձայնավոր, բառային մակարդակի երկակի միավոր է որպես բառ և որպես ձևույթ, ասացական մակարդակի միավոր է որպես նախադասություն և այլն: Արդ՝ ձևույթը ոչ մակարդակային միավոր համարելու սկզբունքը քերականական ձևույթների՝ **հիմնավորման**՝ հիմք լինելու գործառույթի բացակայությամբ է պայմանավորված: Ածանցներն ու ձևորդները չեն կարող հիմք լինել ավելի բարձր մակարդակի միավորների համար, և եթե տվյալ քերականական ձևույթով բառամասին ինչ-որ բաղադրիչ է ավելանում, ապա այդ բաղադրիչը ոչ թե տվյալ ձևույթին, այլ նրանով սկզբնավորվող կամ եզրափակվող բառամասին է ավելանում. հիմքը տվյալ բառամասն է: Սակայն, ի տարբերություն քերականական ձևույթների, արմատը հիմք է լինում քերականական ձևույթների կամ այլ բաղադրիչների համար: Ասվածն իրարալրաց երկու խնդիր է առաջադրում լեզվաբանությանը. 1) զատորոշել բաղադրության սկզբնամասի կամ վերջնամասի համար

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

հիմք ծառայող բառամասը որպես մակարդակային միավոր, 2) պարզել արմատական ձևույթի՝ մի կողմից, և քերականական ձևույթների՝ մյուս կողմից, նույնակարգ միավորներ լինելու իսկությունը։

Առաջին խնդրի լուծման համար բերենք բառեր ու բառաձևեր՝ մի քանի խմբով.

ա) վազք, վազել, վազքուղի, վազքուղիներ, վազքուղիներով,

բ) տուն, անտուն, տնային, տնանկ, տնանկություն,

գ) հեռու, հեռացվել, հեռախոս, հեռախոսազրույց,

դ) գնում եմ, չեմ գնում, կգնամ, պիտի գնամ։

Բերված օրինակները, անկախ նրանից, բառի ելակետային թե քերականական ձևեր են, բառեր են։ Արդ՝ ***ա*** խմբի օրինակներում հիմք ծառայող բառամասերն են (ըստ հերթականության)՝ *վազ-, վազ-, վազք-, վազքուղի-, վազքուղիներ-,* ***բ*** խմբի օրինակներում՝ *-տուն-, -տուն, տ(ու/ը)ն-, տ(ու/ը)ն-, տնանկ-,* ***գ*** խմբի օրինակներում՝ *հեռ-, հեռացվ-, հեռա-, հեռախոսա-,* ***դ*** խմբի օրինակներում՝ *գնում-, -գնում, -գնամ, -գնամ։* Անկախ այն բանից՝ արտածված բառամասերին ի՛նչ բաղադրիչներ են ավելացել՝ ածանցներ, ձևորդներ, արմատներ թե դրանց տարբեր համակցություններ, ձևավորվել են բառեր՝ ելակետային (բառարանային) կամ ձևաբանական

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

ձևավորվածությամբ, այսինքն՝ գոյացել է բառային մակարդակ՝ անկախ այն բանից՝ այդ մակարդակի միավորները՝ բառերը, արմատի՞ց, բաղադրյալ բառի՞ց, թե՞ ձևաբանական բաղադրյալ հիմքից են ձևավորվել: Նշանակում է՝ բաղադրությունների այն բառամասերը, որոնց տարբեր բաղադրիչներ ավելանալով՝ ձևավորվում են բառային մակարդակի միավորներ, իրենք էլ միավորներն են բառայինին նախորդող **հիմնային մակարդակի**: Այսպիսով՝ վերոբերյալ չորս խմբերից արտածված բառամասերի գոյությամբ ձևավորվում է հիմնային մակարդակը, որի միավորը **հիմքն** է՝ բաղադրական (= բառակազմական) կամ ձևաբանական: Հիմքի այս երկու տեսակն էլ նույն գործառույթն ունի՝ հիմնավորման, որով կազմավորվում են հաջորդ մակարդակի միավորները՝ բառերը (ներառյալ բառաձևերը):

Երկրորդ խնդիրն է պարզելը՝ ինչի՛ հիման վրա են նույն խմբում հայտնվում արմատները, ածանցները և ձևորդները: Նույնակարգման մի հիմքը դրանց տրված սահմանումն է, այն է՝ նվազագույն իմաստակիր միավոր լինելը, որը ճշգրիտ է, ուստի վիճարկել չենք կարող: Մյուս հիմքը այդ երեքին հատուկ ձևավորման գործառույթն է, որով էլ արդարացված է դրանց տրված «ձևույթ» անվանումը. արմատի և արմատի, արմատի և ածանցի

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

համակցություններով բառեր են ձևավորվում, արմատի և ձևորդի համակցությամբ՝ բառաձևեր։ Քանի որ վերը ցույց տրվեց, որ ածանցական ու բառահարաբերական ձևույթները մակարդակային միավորներ չեն, իսկ արմատը՝ է՛, ուրեմն վերջինս այդպիսին է ո՛չ որպես ձևույթ։ Ո՛չ իմաստակրությունը, ո՛չ նույնիսկ ձևավորման գործառույթը բավարար չեն մակարդակի և մակարդակային միավորների առանձնացման համար։ Ձևավորումը հիմնավորման գործառույթով է մակարդակ ապահովում. ձևավորվող միավորը նոր մակարդակ է բարձրանում, եթե կա նրա համար հիմքի դեր ստանձնած միավոր։ Իսկ բաղադրության կազմում ձևույթներից այդպիսի դեր կարող է ունենալ միայն արմատը։ Նշանակում է՝ արմատը մակարդակային միավոր է դառնում ոչ թե ձևույթի բերումով, այլ հաջորդող աստիճանի միավորի համար հիմքի դերակատարությամբ՝ որպես **բնահիմք**, քանի որ առաջնային հիմք է՝ հիմն հիմանց. արմատազուրկ բառ չկա։

Սակայն մի ուրիշ ընդհանրություն էլ ունեն արմատական և քերականական ձևույթները։ Ինչպես ասվեց, քերականական ձևույթները զուրկ են հիմք դառնալու գործառույթից։ Արմատական ձևույթները ևս բաղադրող հիմքի դեպքում չունեն այդ գործառույթը, և այս առումով ոչնչով չեն տարբերվում ածանցներից ու ձևորդներից։

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

Այսպես՝ *բ* խմբի նախավերջին բառում՝ *տնանկ,* բաղադրող հիմքն է *-անկ* արմատը, որն ինքնին չունի անվանողական դեր արդի լեզվում, իմաստավորված է *տնանկ* բաղադրությամբ ամբողջապե՛ս, նրա իմաստակազմիչ բաղադրիչներից մեկն է, որ, ի տարբերություն նախորդ բաղադրիչի, չունի նաև հիմնավորման գործառույթ, որովհետև եզրափակում է *տ(ու/ը)ն-* հիմքով բաղադրությունը: Նույն խմբի վերջին բառում՝ *տնանկություն, -ություն* ածանցն ավելացել է ոչ թե *անկ-* արմատին, այլ *տնանկ* բաղադրությանը, որը հիմքն է *տնանկություն* բաղադրության, այլապես պիտի ունենայինք **անկություն* բառ: Բայց անգամ այն դեպքում, երբ հնարավոր լիներ վերջին արմատական բաղադրիչի և ավելացող ածանցի համակցությամբ իմաստավոր միավորի գոյություն, դարձյալ չէր նշանակի, թե վերջին արմատին կցվող ածանցը հենց նրան է ավելանում, ոչ թե այդ ածանցին նախորդող ամբողջ բաղադրությանը: *Վարչակարգային* բառը բաղադրական հիմքերի տրոհելիս առանձնացնում ենք ոչ թե **վար(ի)չ- և *-կարգային* բաղադրիչները, թեև ունենք *կարգային* բաղադրություն՝ որպես բառարանային միավոր, այլ *վարչակարգ-* և *-ային* բաղադրիչները, որովհետև այդ է թելադրում *վարչակարգային* բաղադրության ներքին

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

շարահյուսությունը՝ «վարչակարգին հատուկ՝ վերաբերող» իմաստով:

Այսպիսով՝ ստորակարգային մակարդակների տիրույթում արձանագրում ենք հիմնային մակարդակի գոյությունը, որն առկա է նաև այլ լեզուներում, օրինակ՝ արդի ռուսերենում՝ *кур-(ы), леж-(ать), сам(о)-(лёт), (бес)-сердечный* և այլն:

Հարկ է ավելացնել՝ քանի որ հիմնավորման գործառույթն առհասարակ բոլոր մակարդակային միավորներին է հատուկ (բացի վերին եզրայինից), ուստի «հիմք» տերմինը գործածում ենք երկու հիմաստով՝ նեղ և լայն: Նեղ իմաստով այն նշանակում է հիմնային մակարդակի միավոր, իսկ լայն իմաստով՝ հաջորդող մակարդակի միավորի հենարան: Նեղ իմաստով՝ հիմքը հենարանն է բառային միավորի՝ բառարանային ձևով կամ քերականական ձևավորվածությամբ:

Լիիմաստ բառը՝ բառարանային ձևով կամ քերականական ձևավորվածությամբ, հիմքն է հաջորդ մակարդակի միավորի՝ շարակցության, հետևաբար ստորին սահմանն է շարահյուսության: Այս դեպքում բառը համարվում է շարահյուսական նվազագույն միավոր (ՇՆՄ) [13: **130-131**]: Մակարդակը, հետևելով Գ. Ջահուկյանին, կանվանենք **շարային** [10: **12**]: «Շարակցություն»

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License.

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023
© The Author(s) 2023

անվանումը հուշում է առնվազն երկու ՇՆՄ-ի համակցություն։ Այս երկանդամ կապակցությունն էլ կառուցվածքային շարահյուսության մեջ համարվում է շարահյուսական նվազագույն կառուցվածք (ՇՆԿ) [13: 207-208, **215-217**]։ Ինչպես բառային մակարդակում ոչ միայն արմատների ու ածանցների կամ հիմքերի ու վերջավորությունների, այլև տարբեր բառերի համակցություններից է հնարավոր կազմել նոր բառեր, այդպես էլ շարային մակարդակում է հնարավոր տարբեր շարահյուսական նվազագույն կառուցվածքներից ձևավորել շարահյուսական նոր կառուցվածքներ։ Երկուսից ավել անդամ պարունակող շարահյուսական կառուցվածքները կամ կապակցությունները Է. Աթայանն անվանում է փնջային խմբեր [13: **216-217**], Գ. Ջահուկյանը՝ գերշարույթներ [11]։

Հաջորդ մակարդակն առանձնացվում է՝ շնորհիվ համապատասխան միավորի (կամ միավորների) հաղորդակցական արժեքով պայմանավորված անհամեմատ մեծ անկախության։ Այդ մակարդակը Է. Աղայանը, ինչպես տեսանք, հետևելով Է. Բենվենիստին, անվանում է ստորոգային։ Հրաժարվում ենք այդ անվանումից երկու պատճառով։ Նախ՝ ինչպես ցույց կտրվի ստորև, ստորոգում պարունակում են ոչ միայն մակերեսային ստորոգական կառուցվածքները, այլև քերականական տարադաս հարաբերության

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

մեջ եղող բոլոր միավորները։ Ապա՝ Է. Աղայանն ինքը իր հետագա ուսումնասիրություններում Մ. Աբեղյանի հետևողությամբ, նախադասությունից զատ, հաղորդակցական միավոր է համարում նաև ասությունը, որը զուրկ է մակերեսային ստորոգումից [7: **121-138**, 6: 55-71]։ Այս մակարդակը կանվանենք **ասացական**։ Հարկ ենք համարում նշել, որ այս մակարդակի միավորը նախորդի համեմատ բարձր է ոչ բնավ այն պատճառով, որ նրանից ծավալուն է։ Կարող է և հակառակը լինել։ Կան մինչև իսկ մենանդամ նախադասություններ, մինչդեռ շարակցության համար պարտադիր է առնվազն երկանդամությունը։ Ասացական մակարդակի միավորները շարայինի համեմատ, ինչպես ասվեց, հաղորդակցական դերի արժևորմամբ են գնահատվում, թեև պետք է խոստովանել, որ առաձգականության առումով էլ նախադասությունն անհամեմատ մեծ հնարավորություն ունի ծավալվելու, քան մակերեսային ստորոգման չհասած շարակցությունը։ Նշենք նաև, որ մեզ համար չկա նախադասության՝ լեզվի թե խոսքի միավոր լինելու խնդիր։ Նախադասությունը՝ որպես կաղապարային հնարավորություն, լեզվական է, որպես կաղապարի իրացում՝ խոսքային։ Կաղապարները սահմանափակ են (այլապես անհնար կլիներ հաղորդակցումը), բայց բազմազան են դրանց զուգորդումները։

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

Վերջապես, կես դարից ավել է արդեն, ինչ լեզվաբանությունը հակված է մակարդակային միավոր համարելու նաև տեքստը, որի վարկածայնությունը կարծես դեռ մինչև վերջ հաղթահարված չէ: Բանն այն է, որ ցարդ նշված մակարդակային միավորները՝ հիմքից մինչև նախադասություն, հստակորեն կանոնարկված են: Չկա, սակայն, նույն կանոնականությունը կամ կաղապարային խստությունը տեքստի համար, և սա միանգամայն բնական է: Մակարդակից մակարդակ բարձրանալիս, ինչպես կտեսնենք, մեծանում է ազատության սկզբունքը, և տեքստն անհատի ազատ դրսևորման, ինքնարտահայտման ազատության ամենամեծ միավորն է՝ դիտավորայնության (ինտենցիա) իրացման ամենամեծ հնարավորությամբ: Բանավոր կամ գրավոր տեքստակազմությունը հենց տեքստ կառուցող անհատի համար անակնկալներով լեցուն իրողություն է: Այսպես՝ դիցուք մեկը պատրաստվում է ապագա զրուցակցին ինչ-որ բան հաղորդելու՝ նրան որևէ հարցում ինչ-որ բան համոզելու հեռանկարով: Մոտավոր ասելիքը այս կամ այն կերպ ներքին ձևավորում ունի, այսինքն՝ կա գրեթե պատրաստի ներքին խոսք, որը պետք է արտաքին ձևավորվածության հասնի: Եթե զրուցակիցն առարկելու բան չունի, մոտավորապես նույնությամբ արտաքնանում է ներքին խոսքը: Բայց հնարավոր է նաև՝ այլ ընթացք

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License.
© The Author(s) 2023

ունենա ասելիքը՝ ներքին խոսքից տարբեր ձևավորում, եթե առարկության հանդիպի հաղորդողը։ Հնարավոր է նույնիսկ, որ խոսողը առարկության չհանդիպելիս իրադրության թելադրանքով նույնպես ներքին խոսքից տարբեր կերպ արտահայտի հաղրոդանյութը՝ անգամ նույն բովանդակության պահպանմամբ։ Նույնը հնարավոր է նաև գրավոր տեքստակազմության ժամանակ։ Գիտական, հրապարակախոսական կամ գեղարվեստական ստեղծագործություն գրելուց առաջ ասելիքը ծնվում է մարդու մտքում։ Սովորաբար նման դեպքերում ստեղծելիքի մոտավոր կառուցվածքը պարզ է լինում շարադրողի համար։ Սակայն գրելու ընթացքում շարադրողի հոգեվիճակի և տրամաբանության շաղկապմամբ հաճախ նոր մտքեր են ծնվում, որոնք առավել ամբողջական ու հիմնավոր են դարձնում ասելիքը, իսկ երբեմն էլ բեկում են մտքերի ընթացքն այլ ուղղությամբ՝ նախատեսվածից ու մտադրվածից միանգամայն տարբեր։ Այս ամենը կարծես համոզում է մեզ, որ տեքստը, պայմանավորված այն ստեղծողի անհատական շնորհով, զուտ խոսքային իրողություն է։ Սակայն կա մի բան, դժվարագյուտ մի ընդհանրություն, որի հիման վրա շատերն են մոտավորապես նույնաբնույթ տեքստեր ստեղծում։ Այդ կարողությունը շատերին է տրվում հասարակական փորձով, և հենց

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

այդ հասարակականն էլ հուշում է տեքստի նաև՛ լեզվական իրողություն լինելու իսկությունը։ Եթե մինչև տեքստային միավորները նույն լեզվակիր հանրության բոլոր անդամները այդ լեզվի կաղապարներին տիրապետում են դյուրությամբ, խոսք են արտաբերում լեզվական կաղապարների հիմքով, ապա տեքստի դեպքում ասես հակառակ ընթացքը տեղի ունենա. պատրաստի, արդեն արտասանված տեքստային խոսքը դառնում է լեզվական փաստ, կաղապարվում մեր լեզվագիտակցության մեջ համանման փաստերի կուտակմամբ՝ հնարավորություն տալով փաստացի՛ կաղապարների ստեղծագործական յուրացման։ Սրա ապացույցն են վերջին տասնամյակներում թե՛ ընդհանուր, թե՛ համակարգչային լեզվաբանության մեջ տեքստի կաղապարների մշակումներն ու որոշ հաջողության հասած փորձարկումները։ Տեքստի՝ որպես շարահյուսական միասնական բաղադրյալ միավորի ընկալմանը նպաստում են նրա բաղադրիչների կապակցման հանգույցները՝ նախաբերիչները, հետաբերիչները, ընդհանուր անդամները, տեքստակազմի բաղադրիչ նախադասությունների ստորոգումների ներքին շղթայավորմամբ տեքստային ամբողջությունն ապահովող գերհամադրական ստորոգումը [4: **222**]։ Արդ՝ այս հատվածում մնում է, որ առաջնորդվելով մակարդակների և դրանց միավորների

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

անվանման նույն սկզբունքով՝ ստորակարգության վերին շերտում տեղ հատկացնենք տեքստին [1: **113-138**]: Ոչինչ չէր խանգարի, եթե ընդունեինք Գ. Ջահուկյանի անվանումները՝ հենքային մակարդակ, հինույթ և հենք, սակայն ուզում ենք այստեղ պահպանած լինել մակարդակներին ու դրանց միավորներին տրված անվանումների համաչափությունը, ուստի որպես ասացականին հաջորդող և նրանից բարձր մակարդակ՝ տեքստայինն անվանում ենք **վերասացական** մակարդակ, իսկ միավորը՝ **վերասություն**: Պարտավոր ենք նշել, որ անգամ նույն մարդու՝ տվյալ ժամանակահատվածում արտասանած խոսքի ամեն նախադասություն չէ, որ բաղադրիչ է տվյալ վերասության, ասել է՝ չեն նույնանում խոսքն ու վերասությունը: Վերասությունը տրամաբանական լիակազմություն ունեցող խոսքն է կամ նրա մի հատվածը, որի ներքին կողմը (նշանակյալը) միասնական բովանդակությունն է, արտաքին կողմը (նշանակիչը)՝ այդ բովանդակության միասնականությունն ապահովող կառուցվածքն ու հնչաշղթան՝ հնչերանգային համապատասխան դրսևորումներով:

Իմաստազուրկ միավորների կամ նշանակիչների ինքնանշանակ բնույթը

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

Մինչև հիմա խոսում էինք միայն իմաստակիր միավորների ու դրանցով ձևավորված մակարդակների մասին, որոնք են.

հիմնային մակարդակ. միավորը՝ հիմք,

բառային մակարդակ. միավորը՝ բառ(աձև),

շարային մակարդակ. միավորը՝ շարակցություն,

ասացական մակարդակ. միավորը՝ նախադասություն (նաև՛ ասություն),

վերասացական մակարդակ. միավորը՝ վերասություն։

Անդրադառնանք այժմ իմաստազուրկ միավորներին ու դրանցով ձևավորված մակարդակներին։ Իմաստազուրկ տիրույթում սովորաբար առանձնացնում են մեկ կամ երկու մակարդակ։ Մեկ մակարդակի դեպքում հիմնվում են միայն հնչույթի վրա (հնչութային մակարդակ), երկուսի դեպքում առանձնացնում են նաև հնչութայինին նախորդող տարրութային մակարդակ՝ հիմնվելով տարրույթի (մերիզմա)՝ իբրև հնչույթի տարբերակիչ հատկանիշի վրա։ Այս վերջին մակարդակը շատերը չեն ընդունում՝ հիմնավորելով նրանով, որ յուրաքանչյուր լեզվական միավոր ունի իր տարբերակիչ հատկանիշը, բայց ոչ մի մակարդակում տվյալ միավորի տարբերակիչ հատկանիշով հատուկ մակարդակ չի առանձնացվում։

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

Տրամաբանական առարկություն է, միայն թե պետք է հիշել, որ լեզվի կառուցվածքն արտալեզվական պայմանավորվածություն ունի, իսկ արտաքին իրականությունն ուսումնասիրող գիտությունները, մասնավորապես՝ ֆիզիկան, քիմիան, տարբեր դարաշրջաններում, գիտության զարգացման տվյալ աստիճանին համապատասխան, տարրական տարբեր միավորներ են առանձնացրել: Այդ տարրական միավորը երկար ժամանակ համարվել է **մասնիկը**, ապա՝ **մոլեկուլը**, հետո՝ **ատոմը** և այլն, իսկ այսօր **անվերջ փոքր տարրի** տեսակետն է շրջանառվում: Եվ ինչպես բնության մեջ նշված միավորներն են անորսալի անզեն աչքի համար, այնպես էլ լեզվի մեջ տարրույթն է անորսալի անզեն ականջի համար: Սովորական լսողությամբ մենք ընկալում ենք այս կամ այն տարբերակիչ հատկանիշների ներանցմամբ ձևավորված հնչյուններ, բայց ոչ դրանց հատկանիշները: Մենք ընդունում ենք այս մակարդակն այն հիմնավորմամբ, որ հիշյալ հատկանիշները բառիս բուն իմաստով նյութական են՝ ձայնային կամ ձայնանպաստ հատկանիշներ, առանց որոնց հնչյուն չի կարող լինել: Հնչյունի համար հիմք են, ահա, լեզվաբանական բնութագրության տեսանկյունից կարևորություն ունեցող այդ ձայնային կամ ձայնանպաստ հնչյունակազմիչ տարրերը՝ ձայնորդությունը, ձայնեղությունը, խլությունը, հպականությունը,

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License.
© The Author(s) 2023

շփականությունը, լնդերայնությունը, շրթնայնությունը, լեզվայնությունը, քմայնությունը և այլն, և այլն, իսկ այդ տարրերը բաղադրող հնարավոր ենթատարրերը, որքան էլ կարևոր լինեն, այլևս լեզվաբանության դիտարկման առարկա չեն. դրանցով զբաղվում են այլ գիտություններ՝ բնախոսությունը, ձայնաբանությունը: Ըստ այսմ՝ եթե վերին եզրային մակարդակը վերասացականն է, ապա ստորին եզրայինը **տարրականն** է, միավորը՝ **ձայնատարրը**: Ինչպես երևում է այս բնութագրությունից, սա հակոտնյան է Գ. Ջահուկյանի այն դիտողության, թե փոփոխակային համայնալեզվաբանության համար մակարդակներ են կազմում իմաստակիր նշանները: Մեր մոտեցումը, ի դեպ, արդարացվում է հենց Գ. Ջահուկյանի համընդհանուր լեզվաբանական կաղապարի՝ կազմի կարգի տրամաբանությամբ: Այդ կարգը՝ բաղկացականության իր բնույթով, հնարավորություն է տալիս ստորակարգություն ներառելու ստորին մակարդակի միավորներից բաղկացած ավելի բարձր միավորներ: Այն, թե միավորներից որոնք են իմաստակիր, որոնք՝ ոչ, ներքին խմբավորման խնդիր է միայն և հիմք լինել չի կարող լեզվական հորինվածքի իրական կառուցվածքից դուրս թողնելու համար: Հնչյունների բաղկացությամբ են վանկեր, բառեր, սրանց միջոցով էլ՝ ավելի մեծ միավորներ ձևավորվում, և այս առումով կառուցվածքային

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

բաղկացականության համար տարբերություն չկա՝ հնչյուններից բառե՞ր են կազմավորվում, թե՞ բառերից՝ շարակցություններ, ասություններ, սրանցից էլ՝ վերասություններ:

Ինչ վերաբերում է հնչական մակարդակին, ապա սրա միավորը՝ հնչյունը, և համակարգային հարաբերակիցը՝ հնչույթը, տարածված տեսակետի համաձայն, իմաստազատիչ և իմաստակազմիչ դերեր ունեն: Ունեն, անշուշտ, այդ դերերը, միայն թե վանկակազմությա՛ն օժանդակությամբ: Վանկերի կապակցությունն այնպիսին է, որ դրանք կարող են իրենց կազմ ներառել որևէ ձևույթ, որն իրականում նրան նախորդող կամ հաջորդող իմաստային ոլորտին է վերաբերում: Այսպես՝ *մոտեցրի* բայաձևի հիմքն է *մոտեցր-*, որի հիմքակազմիչ *-ր*-ն վանկ է կազմում *-ի* վերջավորության հետ: Փաստորեն *մոտեցր-* հիմքում ունենք [մո-տեց] վանկերը և վանկի տեսանկյունից առկախ [ր] հնչյունը: Այդկերպ նաև *կասեմ* բայաձևում *կ-* ձևույթը վանկ է կազմում -ասեմ հիմքի [ա] ձայնավորի հետ, և կամ *սեղանի* բառաձևում *-ի* ձևույթը վանկ է կազմում իրեն նախորդող հիմքի վերջահանգ [ն] ձայնորդի հետ: Բերված օրինակների բայական *-ի* վերջավորությունը, *կ-* եղանակիչը, *-ի* հոլովակերտը միահնչույթ ձևույթներ են, որոնք համապատասխան քերականական իմաստներ են կազմավորել, ասել է՝ հնչույթների առաջնային դերը իմաստակիր

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License.
© The Author(s) 2023

միավորներ կազմելու կարողությունն է, միայն թե այդ դերը սոսկ ձևութակազմությանը հատկացնել չենք կարող, որովհետև, ինչպես տեսանք *մոտեցր*- օրինակով (այդպես նաև՝ *գրք*-(ից), *թռչ*-(ել) և այլն), նրանք կարող են նաև հիմքակազմ դեր ունենալ [2: **32**]: Նույնիսկ նշված ձևույթներից յուրաքանչյուրը մեխանիկորեն չի կցվել տվյալ հիմքին, այլ վանկակցման՝ հայերենին հատուկ կշռութային օրինաչափությամբ՝ տրոհելով հիմքի իմաստային և հնչական ամբողջությունը, զատելով նրանից այդ ամբողջությունն ապահովող բաղադրիչներից մեկը և մեկ վանկակազմ ստեղծելով ավելացող ձևույթի հետ: Ուրեմն նոր քերականական իմաստը ձևավորվում է հիմնամասի իմաստային պատկերի աղճատմամբ, որը վերականգնվում և գիտակցվում է այդ նոր իմաստի ձևավորման թելադրանքով ձևահնչութային օրինաչափ դրսևորմամբ: Ասվածը հուշում է, որ խոսքային հոսքը՝ արտասանվածքը, իրոք հնչաշղթա է, և շղթայակցվում են վանկատարրերը, կամ էլ կարելի է ասել՝ հենց վանկերը՝ իրենց կազմում եղած հնչյուններով, իսկ այս կամ այն բաղադրության ներսում իմաստակիր միավորները կապակցվում են վանկակազմ կամ վանկատրոհ եղանակով: Սակայն այնքան ամուր ու հաստատուն է վանկակազմից դուրս մնացող իմաստակիր միավորների առկայությունը մեր ենթագիտակցության մեջ, որ

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

խոսելիս առաջնորդվում ենք ոչ թե այդ միավորների առանձնակի արտասանությամբ, այլ վանկատարրերի կշռութային շղթայակցման օրինաչափությամբ։ Եվ քանի որ դա այդպես է, ապա զուտ արտահայտաբանական տեսանկյունից **հնչյունը առաջնայնորեն վանկաստեղծ դեր ունի** և հիմք է արտասանական տիրույթի՝ իրեն հաջորդող մակարդակային միավորի՝ վանկի համար։ Սակայն պարզվեց, որ մակարդակային միավորների կազմավորման ընթացքը մեխանիկական բնույթ չունի. դրանք պարզունակ գումարելիներ չեն, որոնց գումարն անպայման հաջորդ մակարդակի միավորը լինի։ Միջմակարդակային միավորների հարաբերման հմայքը հաջորդական մակարդակները շրջանցելու հնարավորությունն է՝ ցատկով նաև հաջորդ մակարդակի միավորի կազմավորման իրացվելիությամբ։ Այո՛, հնչյունը վանկակազմ դեր ունի, բայց ունի նաև առանձնաբար կամ մեկ այլ հնչյունի հարակցությամբ վանկակազմից դուրս մնալու հնարավորություն՝ այս կամ այն իմաստակիր միավորը ձևավորելու դերակատարությամբ։ Վանկը բառակազմ գործառույթ ունի. չկա բառ, որ արտասանական տիրություն վանկ կամ վանկերի համաչափ համակցվածություն չլինի։ Բայց այդ պարտադիր դերն ունենալով՝ ունի նաև մեկ այլ օրինաչափություն՝ բառի հնչասահմանի խախտման «իրավաչափ»

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

օժտվածությամբ, որն է վանկի **շարակցակազմ գործառույթը**։ «Մատիտը» բառաձևը եռավանկ է, «ընկավ» բառաձևը՝ երկվանկ, ուստի առանց հնչափոխության՝ սրանց հարակցությամբ ունենում ենք հնգավանկ շարակցություն՝ *մատիտը ընկավ։* Սակայն ձայնավորից առաջ «ը» հոդի ձայնորդ փոփոխակի հնարավորությամբ ունենում ենք նույն շարակցության քառավանկ տարբերակը՝ *մատիտն ընկավ* ՝իբրև մեկ հնչաբառ՝ [մատիտնընկավ]։ Խախտվում է թե՛ մեկ, թե՛ մյուս բառաձևի սահմանը. առաջին բառաձևն իր կազմում չուներ [-նը] հնչակցություն, երկրորդը բառասկզբում չուներ [ն] ձայնորդ։ Եվ այնուամենայնիվ տարբեր բառերի՝ մեր լեզվի նշակարգով թույլատրված սահմանախախտությունը՝ դրանց «սահմանաձողերի» **զոդմամբ**, որևէ դժվարություն չի հարուցում՝ ճանաչելու այդ նույն բառերն իրենց իրական սահմաններով այնպես, ինչպես դրանք ամրակայված են մեր գիտակցությանը։ Ի դեպ, նույնը վերաբերում է և իմաստակիր միավորների համակցությանը։ «Իմ ավագ ընկերոջ գիրքը» շարահյուսա-տրամաբանական ամբողջությունը չորս բառի մեխանիկական կցման արդյունք չէ։ Բերված շարակցության իրարահաջորդ բառերը մասամբ են իրենց այդ հաջորդականությամբ կապակցություն ներկայացնում, իսկ կապակցական հանգույցները

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

բազմազան են։ Նախ՝ չկա կապակցություն «իմ» և «ավագ» կից բառերի միջև, ապա՝ կապակցությունները չեն սահմանափակվում **n-1** բանաձևին համապատասխանող սոսկ երեք կապակցությամբ՝ «իմ ընկերոջ», «ավագ ընկերոջ», «ընկերոջ գիրքը»։ Այս քառաբառ հարակցությունը, բացի նշված երեքից, ունի նաև հետևյալ բաղադրյալ շարակցությունները՝ «իմ ավագ ընկերոջ», «իմ ընկերոջ գիրքը», «ավագ ընկերոջ գիրքը», ինչպես նաև եռանդամ շարակցական բազմություններից յուրաքանչյուրի ներսում երկուական բազմության հատմամբ երկու մենանդամ շարույթ-բազմության («ընկերոջ» և «ավագ») գոյացում։

Իմաստազուրկ միավորների մակարդակներից է, այսպիսով, վանկայինը, որի համակարգային հարաբերակիցը, ինչպես ցույց կտրվի ստորև, **վանկակազմն** է, որը նույն նշանակությունն ունի վանկի գիտակցման համար, ինչ որ հնչույթը՝ հնչյունի։ Ինչպես տեսանք, բառի ներսում վանկը բառակազմ գործառույթ ունի, միջբառային սահմանակետում՝ շարակցակազմ գործառույթ։ Սրանցից բացի՝ այն օժտված է ավելի լայն գործառույթներով։ Վանկերի համակցությամբ հնչաշղթայի կշռութայնությունն է կարգավորվում այնպես, որ հնչական թաղանթով պատված արտասանվածքի իմաստային ընկալումն ապահովվի, կամ, այլ կերպ

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

ասած, իմաստավորվի հնչաշղթան, առանց որի հաղորդակցում չի լինի։ Նշանակում է՝ վանկն ունի արտասանվածքի կշռությունության ապահովման և լայն առումով իմաստակազմ գործառույթներ։ Սակայն վերը ցույց տրվեց, որ լեզվական շինվածքի կառուցավորման պատկերն իրականում ավելի բարդ է, քան կարող էր թվալ առաջին հայացքից։ Հնչյունների մեխանիկական կցմամբ վանկեր չեն գոյանում՝ վանկային մակարդակ ձևավորելու համար, ոչ էլ վանկերի մեխանիկական կցմամբ է հիմնային մակարդակ ձևավորվում։ Յուրաքանչյուր լեզու ունի հնչյունների համակցության և այդ համակցությամբ վանկասերման իր նշակարգը։ Հնչյունները վանկակազմում պահպանում են իրենց իմաստազատիչ գործառույթը, վանկի հնչակազմն էլ թելադրում է վանկակազմի այս կամ այն հնչյունի փոփոխություն՝ փոխված կազմով իսկ պահպանելով ձևույթի գիտակցումը։ Եթե ասացական մակարդակում հնարավոր է մենանդամ նախադասության գոյություն, ապա վանկային մակարդակում հնարավոր է մեկ հնչյունով վանկի գոյություն, որը կարող է զուգադիպել մեկ ձևույթի սահմանին։ Այս փոխադարձությունն է նպաստում թե՛ հիմքի ձևավորմանը, թե՛ նրանով բառակերտմանը կամ ձևակերտմանը։ Հիմնային մակարդակի միավորի՝ հիմքի կազմում, ի՛նչ խոսք, առնվազն մեկ

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

վանկ պիտի լինի. այլ հարց է, որ հիմքում հաճախ վանկատրոհ միավորներ են պատահում, որն արդյունք է լինում ամփոփման, առնմանության ու տարնմանության, հնչահավելման կամ հնչանկման, սղման, ձայնավորի կամ երկբարբառի ու եռաբարբառի փոփոխության, վանկապարպման ու վանկատոգորման կամ էլ փոփոխության՝ նշված օրինաչափություններից մի քանիսի համատեղմամբ։ Իմաստազուրկ և իմաստակիր միավորների համատեղ մակարդակավորման դեպքում վանկայինն իմաստազուրկ միավորների՝ վերջին և իմաստակիր հիմնային մակարդակին անմիջականորեն նախորդող մակարդակն է։ Բառահիմքը կամ ձևաբանական հիմքը վանկ է, վանկամիացություն կամ դրանցից մեկի և սահմանախախտ վանկի բաղադրիչ(ներ)ի հարակցություն։ Նվազագույն բաղադրական կամ ձևակազմական հիմքը բնահիմքն է՝ արմատը, վանկաքանակի տեսանկյունից՝ միավանկ բնահիմքը։ Եվ այսպես՝ իմաստազուրկ միավորների շղթայակցմամբ ձևավորվում են իմաստակիր միավորներ՝ մակարդակ առ մակարդակ կամ մակարդակընդմեջ։ Իմաստազուրկ միավորների հիմնական գործառույթը հե՛նց իմաստակազմությունն է։

Սակայն իմաստազուրկ միավորներն իրականում վանկով չեն սպառվում։ Մինչև վանկային մակարդակը ներառյալ՝

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

ստորակարգային միավորները ինքնին իմաստակիր միավորների կազմավորման սպասարկիչներ են։ Բայց հնարավոր է և լեզվաբանության մեջ իրականացված է նաև իմաստակիր միավորների միայն նշանակիչների քննություն՝ անկախ նշանակյալներից, ինչպես նաև նշանակյալների քննություն՝ անկախ նշանակիչներից։ Նշանակիչների քննության դեպքում իմաստ ունեցող միավորներից զատում են հնչական թաղանթը և տարբեր նկատառումներով կատարում դրանց անկախ հետազոտություն։ Այս դեպքում վանկին հաջորդող միավորն է դառնում հնչաբառը, որն արտաքնապես կարող է զուգադիպել բառին, բայց զուգադիպել կարող է նաև շարակցությանը (բառակապակցությանը)՝ պայմանավորված ներհնչադասական դադարներով, ինչպես նաև հնչադասությանը՝ ավարտահնչերանգի առկայությամբ՝ անկախ նրանից՝ այդ հնչաբառը սահմանային զուգադիպություն ունի բառին, շարահյուսական շարույթին թե միաբառ նախադասությանը։ Հնչաբառին հաջորդող միավորը հնչաշարույթն է, սրան հաջորդողը՝ հնչադասությունը [9: **90**], ապա՝ վերհնչադասությունը։ Հնչաշարույթն առնվազն մեկ ներհնչադասական դադար ունեցող հնչաբառերի շարակցությունն է, հնչադասությունը՝ ավարտահնչերանգով հնչաբառը, հնչաշարույթը կամ դրանց հարակցությունը։

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

Վերինչադասությունն առնվազն մեկ միջինչադասական դադար ունեցող միավորների հարակցությունն է:

Զուտ նշանակյալի և լիածավալ նշանի հարաբերակցությունը

Գալով զուտ իմաստաբանական քննությանը՝ պետք է նկատել, որ մինչև հիմնային մակարդակ ունենք միավորների դատարկ բազմություն (**իմույթը** ձնույթի զուտ բովանդակային հարաբերակիցն է, և ինչպես ձնույթը երկոլորտ նշանի դեպքում մակարդակային միավոր չի համարվում, այդպես էլ իմույթը մակարդակ չի ձևավորում): Հիմնային մակարդակի միավորի՝ հիմքի իմաստը վերացական հիմքն է՝ թելադրված լեզվական համակարգում դրան հարաբերակից հասկացությամբ, որը, հետևելով Է. Աղայանին, կանվանենք **հիմույթ** [5: 381]: Բառային մակարդակի միավորի՝ բառի իմաստը առարկայական վերաբերություն ստացած առարկայի, հատկանիշի և այլնի բովանդակությունն է՝ թելադրված համակարգի՝ դրան համարժեք հասկացական բովանդակության անվանողական դերով, որն անվանում ենք **բառույթ**: Շարային մակարդակի միավորի՝ շարակցության իմաստը դրա բաղադրիչների գերադաս միավորով պայմանավորված հասկացությունն է՝ լրացական իմաստի ներհյուսմամբ, որը կարող է լինել որոշչով գոյական, մակբայով կամ

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

գոյականով բայ և այլն։ Սրա վերացական հարաբերակիցը լեզվի համակարգային տիրույթում **շարույթն** է, որը հաղորդակցական արժեքի ձեռքբերմամբ սահմանային զուգադիպություն է ունենում նախադասության հետ։ Ասացական մակարդակի միավորների՝ նախադասության և ասության իմաստը հաղորդակցական բովանդակությամբ այս կամ այն հաղորդանյութն է, որի հարաբերակիցը վերացական **ասույթն** է լեզվական համակարգում՝ ասացական հնարավոր կաղապարներով։ Վերջապես վերասացական մակարդակի միավորի՝ վերասության իմաստը հնարավոր նախադասությունների և ասությունների շղթայակցությամբ ձևավորվող, նախորդ բոլոր միավորներն իրենում այս կամ այն չափով պարփակող և ընդգրկունությամբ գերազանցող հաղորդանյութն է, որի համակարգային հարաբերակիցը **վերասույթն** է։

Չպետք է անտեսել, սակայն, այն իրողությունը, որ իմաստազուրկ միավորները ևս ունեն իրենց համակարգային հարաբերակիցները, առանց որոնց կաղապարային հնարավորությունների՝ առարկայական արտասանվածք ու հնչաշղթա չի կարող ձևավորվել։ Ըստ այդմ՝ ձայնատարրի լեզվական հարաբերակիցը **տարրույթն** է՝ ձայնատարրի հասկացությունը

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

համակարգում, հնչյունի (նաև երկբարբառի ու եռաբարբառի՝ պայմանավորված սրանց՝ նվազագույն զույգերում իմաստազատիչ դեր ունենալով) հասկացական հարաբերակիցը համակարգում **հնչույթն** է, վանկի համակարգային հարաբերակիցը՝ **վանկակազմը** (այսպես կոչված «վանկույթը»):

Եվ այսպես՝ լեզվական համակարգը տրամաբանական հասկացությունների տիրույթն է, որոնք հայերենում ձևավորվում են *-ույթ* ածանցով, որը համարժեքն է հունարեն *-(e)ma* ածանցի: Միայն վանկի համակարգային համարժեքը, հատկապես երևույթը առանձնաբար քննելիս, «վանկույթի» փոխարեն նախապատվությունը տալիս ենք վանկակազմին: Այս տարբերակի վրա ենք կանգ առնում ոչ այնքան *-ույթ*-ով ձևի անվանման անհարմարության («վանկույթ». դա կարելի էր և անտեսել՝ ի տես միօրինակության), որքան նրա գործառության առանձնահատկությունների հիմքով:

Համակարգից գծակարգ անցումը հոգեբանական շերտով է իրականանում, որ նշանակում է, թե ընթացային-անցումային փուլի հետ գործ ունենք, ուստի շարակարգային շերտի ընթացային վիճակը կամրագրենք հայերեն *-(ա)ցում, -արկում* կամ *-(ա)վորում* բաղադրիչների օգնությամբ: Արդ՝ տարույթից ձայնատարրին

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

անցումը կանվանենք **տարրարկում**, հնչույթից հնչյունին անցումը՝ **հնչարկում**, վանկակազմից («վանկույթից») վանկին անցումը՝ **վանկավորում**, հիմույթից հիմքին անցումը՝ **հիմքավորում**, բառույթից բառին անցումը՝ **բառացում**, շարակազմ-շարույթից շարակցությանն անցումը՝ **շարա(կցա)վորում**, ասույթից նախադասությանն ու ասությանն անցումը՝ **ասութենավորում**, վերասույթից վերասությանն անցումը՝ **վերասութենավորում**:

Գոյաբանական շերտավորվածության են ենթակա ոչ միայն ստորակարգային բուն միավորները, այլև դրանց ենթաբաղադրիչները: Վերն ասացինք, որ հետևելով Գ. Ջահուկյանին՝ ձևույթը մակարդակային ինքնուրույն միավոր չենք համարում: Բայց դա չի նշանակում, թե այն դուրս է մնում գոյամակարդակային տիրույթներից: **Ձևույթն** ինքնին հենց հասկացական, այսինքն՝ լեզվատրամաբանական-համակարգային իրողություն է, որը շարակարգային շերտի անցումային զորությամբ **ձևավորում է** գծակարգային միավորներ՝ **ձևորդ**, **ածանց** և **արմատ**: Նշենք, որ նմանատիպ շերտատման են ենթարկվում նաև այլ իրակություններ, օրինակ՝ քերականական կարգերը, շարահյուսական հարաբերությունները և այլն: Այսպես՝ թվի կարգի դեպքում համակարգային թիվը կլինի այն ընդհանրական հասկացությունը, որ

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

հատուկ է այս կամ այն քանակով թիվ ունեցող լեզուներին: Ավելին, եզակի, հոգնակի կամ այլ թվի հասկացությունն էլ համակարգային է, և դրանց իրացումը՝ գծակարգային: Շարակարգային գոյամակարդակում գործ ունենք առարկայանալի թվի ընտրության հետ, որի միջնորդությամբ է գծակարգում մասնավորվում այս կամ այն թիվը: Նույնը, ինչպես ասացինք, վերաբերում է նաև հոլովման ու հոլովի, եղանակի, ժամանակի, բայասեռի և բոլոր-բոլոր քերականական կարգերին:

Ի մի բերելով այս ամենը՝ կարող ենք տալ լեզվական գոյամակարդակների և ստորակարգային մակարդակների հարաբերակցության պատկերը՝ երկու տարբերակով՝ նշանակչի և լիարժեք նշանի (տե՛ս աղյուսակներ 1, 2):

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

ՆՇԱՆԱԿՅԻ ՆԵՐՆՇԱՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ՍՏՈՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ԼԵԶՎԱԿԱՆ ԳՈՅԱՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ		
	ՀԱՄԱԿԱՐԳ	ՇԱՐԱԿԱՐԳ	ԳԾԱԿԱՐԳ
տարրական	(հնչա)տարրույթ	(հնչա)տարրարկում	(հնչա)տարր
հնչական	հնչույթ	հնչարկում	հնչյուն, երկբարբառ, եռաբարբառ
վանկային	վանկակազմ («վանկույթ»)	վանկավորում	վանկ
հնչաբառային	հնչաբառույթ	հնաչաբառացում	հնչաբառ
հնչաշարային	հնչաշարույթ	հնչաշարակցում	հնչաշարակցություն
հնչադասական (հնչասացական)	հնչադասույթ (հնչասույթ)	հնչադասութենավորում (հնչասութենավո րում)	հնչադասություն (հնչասություն)
վերհնչադասական (վերհնչասացական)	վերհնչադասույթ (վերհնչասույթ)	վերհնչադասութենավորում (վերհնչասութենավորում)	վերհնչադասություն (վերհնչասու թյուն)

Եթե իմաստակիր միավորների դեպքում համակարգային տիրույթի բաղադրիչները նշանակյալներն են գծակարգային տիրույթի միավորների, ապա այս դեպքում գործ ունենք ինքնանշնակ իրողության հետ: Աղյուսակի համակարգային տիրույթում խոսքային հնչյունի լեզվական բովանդակությունն է, գծակարգային տիրույթում՝ լեզվական հնչյունի (հնչույթի) խոսքային արտահայտությունը: Այդպես է մնացյալ բոլոր բաղադրիչների դեպքում: Շարակարգային բաղադրիչներն էլ յուրօրինակ ինքնանշանակման վկայություններ են:

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

Իմաստազուրկ և իմաստակիր միավորների կառուցվածքային միասնական բաղկացությունը տալիս մակարդակների երկու ենթախումբ ենք առանձնացնում՝ նշանակչի և նշանի: Այս միասնական համակարգում նշանակչի վերին եզրը վանկային մակարդակն է:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՍՏՈՐԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ՝ ԼԵԶՎԱԿԱՆ ԳՈՅԱՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՍՏՈՐԱԿԱՐ ԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ ՆԵՐ	ԼԵԶՎԱԿԱՆ ԳՈՅԱՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ		
	ՀԱՄԱԿԱՐԳ	ՇԱՐԱԿԱՐԳ	ԳԾԱԿԱՐԳ
տարրական	հնչատարրույթ	հնչատարրարկում	հնչատարր
հնչական	հնչույթ	հնչարկում	հնչյուն, երկբարբառ, եռաբարբառ
վանկային	վանկակազմ («վանկույթ»)	վանկավորում	վանկ
հիմնային	հիմույթ	հիմքավորում	հիմք
բառային	բառույթ	բառացում	բառ(աձև)
շարային	շարույթ	շարակցավորում	շարակցու թյուն
ասացական	ասույթ	ասութենավորում	Նախադասու թյուն, ասություն
վերասացական	վերասույթ	վերասութենավո րում	վերասություն

Այս ամենը իմաստավորվում է նրանով, որ լեզվական միավորների ու մակարդակների հարաբերությունները, դրանց օրինաչափությունն արտալեզվական հիմնավորում ունեն:

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

Լեզվական իրակությունների փոխպայմանավորվածությունը հիմնավորված է արտաքո լեզվի համանման իրակությունների օրինաչափականությամբ. նյութաշխարհի վերացական անդրադարձը կա լեզվում. վերջինս կառուցված ու համակարգված է նրա նմանողությամբ [3: **44**]:

Լեզվաբանական գիտակարգերի նշանագիտական բնութագիրը (եզրակացության փոխարեն)

Մեզ մնում է այստեղ կայական հայեցակետով ներկայացնել լեզվաբանության բաժինները՝ մակարդակային բաշխվածությամբ: Տարրական մակարդակի քննությամբ զբաղվում է **տարրագիտությունը**, հնչական մակարդակի քննությամբ՝ **հնչագիտությունը**, վանկային մակարդակի ուսումնասիրությամբ՝ **վանկագիտությունը**, հիմնային մակարդակի ուսումնասիրությամբ՝ **հիմքագիտությունը**, բառային մակարդակի ուսումնասիրությամբ՝ **բառագիտությունը**, շարային մակարդակի ուսումնասիրությամբ՝ **շարագիտությունը**, ասացական մակարդակի ուսումնասիրությամբ՝ **ասացագիտությունը**, վերասացական մակարդակի ուսումնասիրությամբ՝ **վերասացագիտությունը**: Սա բնավ չի նշանակում, թե մենք հրաժարվում ենք ցարդ եղած գիտակարգային

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

անվանումներից: Պարզապես մեր առանձնացրած մակարդակների միասնությունը և ստորակարգության տրամաբանությունը ցույց տալու նպատակով պարտավոր էինք նաև ցույց տալ միասնական անվանակարգության հնարավորությունը: Չմոռանանք, որ սույն աշխատությունը ընդհանուր լեզվաբանության հայեցակերպով է ստեղծված, ուստի մասնավոր լեզվաբանությանը որևէ պարտադրանքի հավակնություն չունի, թեև բացառված չէ նաև առաջարկվածի իրացվելիությունը վերջինում:

Բացի նշվածներից՝ լեզվաբանության բաժինները հնարավոր է զատել ուղղաձգորեն կամ ըստ գոյամակարդակների ևս: **Համակարգային լեզվաբանությունը** պիտի զբաղվի տրամաբանական հասկացությունների՝ անվանողական դեր ունեցող միավորների, և դրանց հարաբերությունների ուսումնասիրությամբ: Ասել է՝ քննության հիմքում պիտի լինեն լեզվատրամաբանական կաղապարներն ու բանաձևերը՝ գծակարգային հնարավորության մեկնելիությամբ: Ենթադրելի է, որ համակարգային լեզվաբանությունը **լեզվաբանական տրամաբանության** (**լեզվատրամաբանության**) միջգիտակարգի արժեք պիտի ունենա՝ պարզելու մարդկային լեզվի, մասնավոր լեզվի և տրամաբանության փոխհարաբերությունը: **Շարակարգային լեզվաբանությունը**

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

տրամաբանական հնարավորությունների ընտրության խնդիրներով պիտի զբաղվի՝ այդ հնարավորությունները հոգեկան պատկերացումների փուլով գծակարգում ակնթարթորեն առարկայնանալու մեկնելիությամբ: Սա **լեզվաբանական հոգեբանության** (**լեզվահոգեբանության**) միջգիտակարգն է, որ հոգելեզվաբանության հետ տարբեր ելակետերից պիտի պարզի լեզվի և հոգեկան դրսևորումների փոխպայմանավորված գործունեությունը: **Գծակարգային լեզվաբանությունը** պիտի զբաղվի (արդեն իսկ զբաղվում է) արտահայտաբանական միավորների՝ արտասանական նվազագույն միավորից մինչև առավելագույնը ներառյալ, և դրանց հարաբերությունների վերհանմամբ: Այս մի միջգիտակարգն էլ նպատակահարմար է անվանել **լեզվաբնախոսական ձայնաբանություն**՝ բանավոր խոսքի համար, և **լեզվաբնախոսական գրաբանություն**՝ գրավոր խոսքի համար: Ակներև է, որ լեզվաբանության ուղղաձիգ բաժինները միջգիտակարգեր են:

Լեզվական գոյամակարդակների նշանային բնույթին համապատասխան՝ լեզվաբանական միջիտակարգերը ևս միջնշանային և ներնշանային հարաբերության մեջ են: Համակարգային լեզվաբանությունը կամ լեզվաբանական

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

տրամաբանությունը այս առումով ելակետայինը և ամենից տարողունակն է, նշանակյալն է շարակարգային և գծակարգային լեզվաբանական գիտակարգերի: Գծակարգային լեզվաբանությունը նշանակիչն է շարակարգային և համակարգային լեզվաբանական գիտակարգերի: Եթե համակարգային լեզվաբանությունը նշանակյալի նշանակյալ է, ապա գծակարգայինը նշանակչի նշանակիչ է: Սա պայմանավորված է շարակարգային լեզվաբանության՝ համակարգայինի և գծակարգայինի միջև գրված դիրքով: Ըստ այդմ՝ շարակարգային լեզվաբանությունը նշանակյալն է գծակարգային լեզվաբանության և նշանակիչը՝ համակարգային լեզվաբանության:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Ա. Ս**. (2023), Իրականություն, լեզվագիտակցություն, նշան, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Աբրահամյան Ա. Ս**.(2017) , Ցուցանշանից խորհրդանշանին անցումը լեզվում // ԲԵՀ, Երևան, հմ. 2 (23), էջ 32:
3. **Աթայան Է**. (1988), Լեզուների ձևաբանական տիպաբանության առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիրը //ԲԵՀ, էջ 44:
4. **Աթայան Է**. (1981), Լեզվական աշխարհի կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան:
5. **Աղայան Է**. (1967), Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023

6. **Աղայան Է**. (1988), Նախադասության մասին //ԲԵՀ, հմ. 1:
7. **Աղայան Է**. (1987), Նախադասություն և ասություն //ԲԵՀ, հմ. 1:
8. **Բենվենիստ Է**. (2023), Ընդհանուր լեզվաբանության խնդիրներ, հ. I, Երևան, «Սարգիս Խաչենց» **.** «Փրինթինֆո»:
9. **Ջահուկյան Գ**. (1974), Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
10. **Ջահուկյան Գ**. (2003), Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, «Ասողիկ»:
11. **Ջահուկյան Գ**. (1990), Շարույթը որպես լեզվական միավոր // ՀԼԳԴ, հմ. 2:.
12. **Benveniste E. (**1962), Les niveaux de l'analyse liguistique // «Preprints of Papers for the Ninth International Congress of Linguists», Cambridge, Mass.
13. **Атаян Э**. (1968), Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, Митк. 12.

Հապավումների բանալի

ԲԵՀ – Բանբեր Երևանի համալսարանի (հանդես)

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան

ԳԱ – Գիտությունների ակադեմիա

ՀԼԳԴ – Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում (հանդես)

[1]e-mail: davitgiulzadyan@gmail.com

Received: 06/12/2023
Revised: 15/12/2023
Accepted: 22/12/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommer-cial 4.0 International License. © The Author(s) 2023